Արձանագրություն N 3
«ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԱՊՁԲ-17/8» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(Համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի մատակարարման)

ք. Երևան 01 օգոստոսի 2017թ.
ժամը՝ 9:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի

նախագահ՝ Ա.Գրիգորյան

քարտուղար՝ Ա.Ղարիբջանյան

անդամներ՝ Գ.Սիմոնյան, Գ.Ալոյան, Ա.Մկրտչյան, Ա.Գրիգորյան

1. ԳՀ ընթացակարգի հայտերի բացման մասին

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ) կետով սահմանված պահանջները, մասնակցի հետ վարվել է միաժամանակյա բանակցություն, որի արդյունքում հայտով ներկայացված գինը չի նվազեցվել:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացվել առաջին տեղերը զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի զ) ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներից պահանջվել են սահմանված փաստաթղթերը:

Արձանագրվել է, որ Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Պատվիրատուի կողմից սահմանված պահանջներին:

Վերոհիշյալով պայմանավորված հաձնաժողովը որոշեց՝

ա/ ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող է ճանաչել 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 9-րդ չափաբաժինների համար «Միկրորինգ» ՍՊԸ-ին, 6-րդ և 8-րդ չափաբաժինների համար «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին, 7-րդ չափաբաժնի համար «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին:

բ/ ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների համար «ԻնոԹեքնոլոջի» ՍՊԸ-ն, 5-րդ չափաբաժնի համար «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին, 6-րդ և 7-րդ չափաբաժինների համար «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ին, 8-րդ չափաբաժնի համար «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին:

գ/ ընթացակարգի երրորդ տեղ զբաղեցնող ճանաչել 1-ին չափաբաժնի համար «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ին, 2-րդ չափաբաժնի համար «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին և 3-րդ չափաբաժինների համար «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ին, 7-րդ չափաբաժնի համար «Նորմա պլյուս» ՍՊԸ-ին:

4-րդ չափաբաժնի համար մրցույթը չկայացած է հայտարարվել Պատվիրատուի կողմից նախատեսված ֆինանսական միջոցներից ավելի բարձր գին առաջարկելու հիմքով:

3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանվել է անգործության ժամկետ 5 օրացուցային օր:

4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, հրավերով Նախատեսված կարգով ընտրված մասնակցի հետ առաջարկվել է կնքել պայմանագիր:

ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Մասնակցում էին՝ հանձնաժողովի

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Գրիգորյան

քարտուղար՝ _____ Ա.Ղարբջանյան

անդամներ՝ _____ Ա.Մկրտչյան

_____ Գ. Սիմոնյան

_____ /Գ.Ալոյան

_____ Ա.Գրիգորյան